ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024թ. մարտի 19 -ի, N 87 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՎԵՐԻՆ ԲԱԶՄԱԲԵՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՌԼԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 176-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով «Վերին Բազմաբերդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կառլեն Հովհաննիսյանի 2024 թվականի մարտի 19-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. 2024 թվականի մարտի 23-ից ապրիլի 1-ը ներառյալ ՀՀ Արագածոտնի մարզի «Վերին Բազմաբերդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կառլեն Հովհաննիսյանին տրամադրել չվճարվող արձակուրդ:

2. ՀՀ Արագածոտնի մարզի «Վերին Բազմաբերդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել դպրոցի փոխտնօրեն Հերմինե Նորեյանի վրա:

Восстановлен документ

X

VERIFIED OCSP 3/19/2024 14:20:03 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ